

# ԱՆԳՆԵՐԵՆ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Արուս Մարգարյան

*Երևանի պետական համալսարան*

**Բ**անավոր խոսքը պահանջում է ավելի շատ հմտություններ և գիտելիքներ, քան պարզապես քերականորեն ճիշտ նախադասություններ կազմելը: Մի շարք պատճառներով օտար լեզվով խոսելն ավելի դժվար է, քան գրելը: Որպեսզի աշակերտները կարողանան հաղթահարել այդ դժվարությունները և ձեռք բերեն հաղորդակցական հմտություններ, անհրաժեշտ է, որ ուսուցիչները հետևեն որոշակի սկզբունքների և ստեղծեն իրական կյանքին մոտ իրավիճակներ՝ բանավոր հաղորդակցությունը խթանելու համար:

**Բանալի բառեր.** հաղորդակցական հմտություններ, բանակցային լեզու, սահունություն, ճշգրտություն, փոխհատուցման կարողություններ, խուսանավման վարքագիծ, հաղթահարման վարքագիծ:

## Ներածություն

Օտար լեզվի իմացությունը նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Այդ պատճառով էլ օտար լեզվի (կամ լեզուների) դասավանդումը հանրակրթական դպրոցում խիստ կարևորվում է:

Նշելով, որ օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնության ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը, միջնակարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական դպրոցում օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակը, այն է՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները («Չափորոշիչներ» 2007):

## Բանավոր հաղորդակցման ժամանակ առաջացող խնդիրները

Տարածված է այն թյուր կարծիքը, որ օտար լեզվով հաղորդակցվելու համար բավական է տիրապետել լեզվի քերականությանը և ունենալ բավարար բառապաշար: Հենց այս սկզբունքով էլ, ցավոք, հիմնականում ղեկավարվում են անգլերեն լեզվի ուսուցիչները, աշակերտներին ջանասիրաբար բացատրելով քերականական կանոնները, սերտել տալով բացառություններ, անգիր հանձնարարելով բառերի շարքեր, որոնք մի քանի դաս հետո մոռացվում են: Սակայն ամենալավ աշակերտներն անգամ դժվարանում են պատասխանել օրվա դասի հետ առնչություն չունեցող ամենապարզ հարցերին. նրանք չունեն անգլերեն լեզվով բավարար *հաղորդակցական հմտություններ*:

Հաղորդակցվել նշանակում է ընկալել լսածը կամ ընթերցածը և տալ տրամաբանական պատասխան՝ գրավոր կամ բանավոր: Իսկ այդ ունակությունները

ծեռք են բերվում հատուկ մշակված նպատակային վարժությունների շնորհիվ:

Հայ աշակերտների համար առանձնահատուկ դժվարություն է ներկայացնում բանավոր հաղորդակցվելը (լսելը և հատկապես խոսելը): Պատճառները կարող են բազմաթիվ լինել:

- դպրոցներում գրեթե անտեսվում են լսողական ընկալման ունակությունների զարգացմանն ուղղված վարժությունները, իսկ բանավոր խոսքի զարգացման համար վարժությունները հիմնականում սահմանափակվում են պարզունակ (և ձանձրալի) փոխակերպական վարժանքներով և ընթերցված տեքստի վերաբերյալ հարց ու պատասխանով;
- իրական խոսքային գործունեությունը տեղի է ունենում հանպատրաստից, խոսողը չունի երկար մտածելու, խոսքը ձևակերպելու, վերանայելու, ուղղելու հնարավորություն (ի տարբերություն գրավոր խոսքի);
- բանավոր և գրավոր խոսքն ունեն իրենց բնորոշ քերականական և բառապաշարային առանձնահատկություններ, որոնց աշակերտները սովորաբար ծանոթ չեն;
- բանավոր հաղորդակցվելիս հայ աշակերտի համար ամենակարևոր խոչընդոտը կարող է լինել նրա հոգեբանական բարդույթը՝ սխալվելու և ընկերների ծիծաղին (կամ ցածր գնահատականի) արժանանալու վախը: Այդ պատճառով ինչ-որ բան ասելուց առաջ նրան մտահոգում է ոչ թե ինչ ասելու, այլ ինչպես ասելու խնդիրը:

#### **Բանավոր խոսքի տարրերը**

Դասի ժամանակ կատարվող բանավոր փոխակերպական վարժությունները չեն կարող բավական լինել բանավոր խոսքի հմտությունների ձևավորման համար, քանի որ բանավոր խոսքն ընդգրկում է մի շարք տարրեր, որոնք անհրաժեշտ է սովորեցնել աշակերտին:

**Կապակցված խոսք** – անգլերենի հնչյունները կամ առանձին բառերը (օրինակ՝ *I would have gone*) պարզապես արտաբերել կարողանալը բավական չէ հաղորդակցվելու համար, պետք է կարողանալ սահուն կապակցված խոսք արտասանել (*I'd've gone*) և լսածը ընկալել: Կապակցված խոսք արտաբերելիս որոշ հնչյուններ կարող են ձևափոխվել, բաց թողնվել, ավելացվել և այլն: Այս բոլոր երևույթներին աշակերտները պետք է ծանոթանան հատուկ վարժությունների միջոցով:

**Արտահայտչամիջոցներ** – անգլերենի լեզվակիրները տարբեր զգացմունքներ կամ ասվածի նկատմամբ վերաբերմունք արտահայտելու համար օգտագործում են ձայնի ուժգնության, արագության, շեշտի, առոգանության փոփոխություններ և այլ արտալեզվական միջոցներ: Աշակերտները նույնպես պետք է սովորեն դրանք՝ լիակատար և արդյունավետ հաղորդակցվելու համար:

**Քերականություն և բառապաշար** – ինքնաբուխ խոսքն աչքի է ընկնում յուրաքանչյուր լեզվական գործառնությին բնորոշ որոշակի արտահայտություններով և կառույցներով: Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել որոշակի արտահայտություններ՝ զարմանք, առարկություն, հավանություն, համաձայնություն և այլ վերաբերմունք արտահայտելու համար, ինչպես նաև արտահայտություններ, որոնց կարիքը նրանք հավանաբար կզգան տարբեր հաղորդակցական իրավիճակներում (ասենք՝ պաշտոնական նամակ գրելիս):

**Բանակցային լեզու** – հաղորդակցման ընթացքում մենք օգտագործում ենք որոշակի բանակցային միջոցներ՝ մեր ասածը կամ լսածը պարզաբանելու, ավելի հասկանալի դարձնելու համար: Դա հատկապես կարևոր է սովորողների համար, և շատ օգտակար կլինի նրանց սովորեցնել որոշակի արտահայտություններ, ինչպես օրինակ՝ *(I'm sorry) I didn't quite catch that. (I'm sorry) I don't understand. Could you explain that again, please? The point I am trying to make is that ... Or, to put it another way ...* և այլն:

### **Բանավոր խոսքի դասավանդման որոշ սկզբունքներ**

Աշակերտների բանավոր խոսքի ունակությունները հաջողությամբ ձևավորելու և զարգացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել որոշակի սկզբունքներով:

- Խոսքի հմտությունները և հաղորդակցական ռազմավարությունները պետք է կիրառվեն հենց դասարանում: Աշակերտներին պետք է հնարավորություն տրվի խոսել դասարանում, քանի որ լեզուն սովորելու գլխավոր նպատակը նրանով վարժ խոսել կարողանալն է, իսկ դասարանը շատ դեպքերում միակ վայրն է, որտեղ նրանք հնարավորություն ունեն անգլերեն խոսել: Սակայն վարժ խոսելու համար անհրաժեշտ է սովորել ոչ միայն քերականություն և բառապաշար, այլև գործառնության լեզու և զարգացնել հաղորդակցական հմտություններ:

Վարժ խոսքը նկարագրելու համար հաճախ օգտագործվում են *սահունություն* և *ճշգրտություն* տերմինները:

*Սահունությունը* ցույց է տալիս, թե խոսողը որքան արագ և վստահ կարող է արտահայտել իր միտքը՝ առանց երկմտելու, առանց երկար դադարների, կամ բառերի ընտրության համար երկար մտածելու և այլն: Արագությունը կարևոր է, բայց կարևոր են նաև դադարները, ընդ որում՝ ոչ թե նրանց երկարությունը, այլ հաճախությունը: Չափազանց երկար կամ չափազանց հաճախակի դադարները ցույց են տալիս, որ խոսողը դժվարանում է մտքերն արտահայտել: ԷԼԲ ավելի կարևոր է դադարները ճիշտ տեղում դնելը, քանի որ դրանից է կախված խոսքի ճիշտ և դյուրին ընկալումը:

Սահունության պատրանք ստեղծելու և անհարկի դադարները լցնելու համար խոսողներն օգտագործում են որոշ արտահայտություններ (*sort of..., I mean...*) կամ բառային կրկնություններ:

*Ճշգրտությունն* արտաբերված խոսքի համապատասխանությունն է իրադրությանը: Որոշակի իմաստ արտահայտելու համար լեզվամիջոցների ընտրությունը կախված է իրադրությունից, հաղորդակցության մասնակիցների հարաբերությունից ու կարգավիճակից: Օրինակ՝ ընկերն ընկերոջը կարող է ասել. *I'm opening the window, OK?*, մինչդեռ անձանոթին կարող է ասել. *Do you mind if I open the window?*: Բառերի ու արտահայտությունների ճիշտ ընտրությունից, տեղին և ճիշտ օգտագործված կապակցող բառերից, հասկանալի արտասանությունից ու պատշաճ առոգանությունից է կախված այն, թե խոսքը որքանով ճիշտ կընկալվի:

Հաղորդակցական մոտեցման զարգացումը պահանջում է, որ ուսուցիչները ոչ միայն սովորեցնեն ճշգրիտ արտասանություն, քերականություն և բառապաշար, այլև այդ տարրերի ճիշտ գործածություն ազատ հաղորդակցության ընթացքում: Դա կարևորում է այնպիսի վարժությունների կատարումը, որոնք

ուղղված են սահունության ու ճշգրտության ամրապնդմանը: Անհրաժեշտ է զարգացնել այնպիսի կարողություններ, ինչպիսիք են՝ զրույց սկսելու և ավարտելու, խոսողին համբերությամբ լսելու և իր հերթին սպասելու, ժամանակին միջամտելու, տեղին և նրբանկատորեն ընդհատելու, և այլ կարողություններ: Եթե այս հմտությունները բացակայում են, հաղորդակցությունը կարող է ընդհատվել, կամ արդյունավետ չլինել: Դրան կարող է նպաստել նաև համապատասխան մշակութային պայմանականություններին անտեղյակ լինելը:

Աշակերտներին անհրաժեշտ է սովորեցնել փոխհատուցման կարողություններ՝ չիմացած բառը փոխարինել մեկ այլ բառով կամ բացատրական արտահայտությամբ, օգտագործել ժեստեր և դիմախաղ՝ միտքն ավելի հստակ բացատրելու համար, ինչպես նաև հարցեր տալ լսածը ճշտելու կամ հաստատելու համար:

Ֆաերչն ու Կասպերը (Faerch and Kasper 1983) *փոխհատուցման կարողությունները* բաժանում են 2 խմբի՝ *խուսանավման վարքագիծ* և *հաղթահարման վարքագիծ*: Առաջինի դեպքում խոսողը փորձում է խուսափել առաջացած լեզվական խնդիրներից թեման փոխելով կամ պարզապես զրույցին չմասնակցելով: Հաղթահարման վարքագծի դեպքում խնդիրը լուծելու ուղիներ են ընտրվում, օրինակ՝ մայրենի լեզուն օգտագործելը (*Come into the dasaran*), մայրենի լեզվի ազդեցությամբ նոր բառեր ստեղծելը (*I think plannification of lessons is important*), ասվածը վերածնակերպելը (*I have two ... I have one brother and one sister*), օգնության համար խոսակցին դիմելը (*It's.... What is this colour?*) և շարժումները (օրինակ՝ մատնացույց անելը):

Այս գիտելիքներն ու հմտությունները ձեռք բերելու համար դասագրքերում գետնեղված կարճ երկխոսությունները սերտելն իհարկե բավական չէ: Հարկավոր են հատուկ մշակված վարժություններ և աշխատանքներ:

### **Բանավոր խոսքի զարգացմանն ուղղված որոշ միջոցներ**

- Աշակերտների միջև հաղորդակցությունն անհրաժեշտ է ապահովել զույգային/խմբային աշխատանքների միջոցով, սահմանափակելով ուսուցչի խոսքին հատկացվող ժամանակը: Դրա համար անհրաժեշտ է նրանց սովորեցնել զրույց սկսելու/բացելու և ավարտելու/փակելու, ինչպես նաև հրավեր, շնորհավորանք, բողոք, և այլն արտահայտելու և դրանց պատասխանելու ընդունված ձևերը:
- Անհրաժեշտ է խթանել դասարանում աշակերտների բանավոր հաղորդակցումը: Կարևոր է, որ աշակերտները ներգրավված լինեն իրական ակտիվ հաղորդակցության՝ զրույցի մեջ: Նրանք պետք է իրար հետ հաղորդակցվելու, իրար տեղեկություն հաղորդելու կամ հարցերի միջոցով տեղեկություն ստանալու անհրաժեշտություն զգան: Ինչպես որ կարդալ սովորում են կարդալով, այնպես էլ՝ խոսել սովորում են խոսելով:

Հայաստանի հանրակրթական դպրոցների անգլերեն լեզվի դասագրքերում կան բազմապիսի վարժություններ, որոնք միտված են բանավոր խոսքի զարգացմանը: ՀՀ ԿԳՆ-ը անգլերեն լեզվի առարկայական ծրագրերում և չափորոշիչներում առաջարկում է մեծ թվով առաջադրանքներ՝ ուղղված խոսքի զարգացմանը, ինչպես օրինակ՝ նկարագրություն, համակցում, համադրում, խճանկար, «ձնագունդ», բանավեճ, դերախաղ և այլն, որոնցից ամեն ուսուցիչ կարող է ընտրել դասարանի մակարդակին և դասի թեմային համապատասխանող առաջադրանք:

Այլ խնդիր է, թե ինչպես խթանել աշակերտների՝ դասարանում խոսելու կարողությունները: Եթե աշակերտները դժկամությամբ են խոսում դասարանում, նրանք խոսել սովորելու քիչ հնարավորություն ունեն, ավելին, նրանց պասիվության պատճառով մյուս աշակերտներն էլ զրկվում են հաղորդակցվելու և խոսելու հնարավորությունից:

Նեյշնը (Nation 2007) առաջարկում է երկչոտ աշակերտներին քաջալերելու որոշ միջոցներ.

1. Հնարավորինս հեշտացնել առաջադրանքը: Եթե աշակերտը բավականաչափ գիտելիքներ չունի առաջադրանքը լավ կատարելու համար, բնականաբար նա չի ցանկանա կատարել այն: Այդ խնդիրը կարելի է լուծել հետևյալ կերպ.

- աշակերտներին ավելի երկար ժամանակ տալ պատրաստվելու համար;
- առաջադրանքը համապատասխանեցնել աշակերտների ունեցած կենսափորձին, որպեսզի նրանք կարողանան օգտագործել իրենց ֆոնային գիտելիքները տվյալ բնագավառում;
- աշակերտներին հնարավորություն տալ համատեղ կատարել որոշ առաջադրանքներ: Խմբային աշխատանքի դեպքում յուրաքանչյուր աշակերտի անհրաժեշտ է տալ հստակ առաջադրանք կամ դեր, առանց որի ամբողջական առաջադրանքը չի կատարվի:

2. Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական կարողությունները, հետաքրքրություններն ու պահանջմունքները: Դասարանում բոլոր աշակերտները նույն ընդունակությունները, հմտությունները և գիտելիքները չունեն, հետևաբար աշխատանքը կարելի է կազմակերպել այնպես, որ ամեն մեկը ստանա իր գիտելիքներին և հետաքրքրություններին համապատասխան առաջադրանք:

3. Անհրաժեշտ է աշակերտների մոտ ձևավորել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, որպեսզի նրանք առավել հաճույքով ու ակտիվորեն մասնակցեն աշխատանքին: Որպեսզի աշակերտները ավելի ազատ ու անկաշկանդ խոսեն դասարանում, անհրաժեշտ է.

- փոխել աշակերտների բացասական վերաբերմունքը սխալների նկատմամբ, վերացնել սխալ թույլ տալու վախը: Անհրաժեշտ է նրանց հետ քննարկել օտար լեզվով խոսելու կարևորությունը, բացատրել, թե որն է առաջնային՝ սահունությունն ու ճգրտությունը, թե՞ իմաստի ճիշտ հաղորդումը: Երբ նրանց հաջողվի ճիշտ հաղորդել անհրաժեշտ իմաստը, նրանք աստիճանաբար ավելի քիչ կկենտրոնանան սխալների և ավելի շատ՝ իմաստի վրա: Իհարկե ուսուցիչն էլ պետք է հիշի, որ բանավոր հաղորդակցության ընթացքում չի կարելի ընդհատել աշակերտին և ուղղել նրա թույլ տված սխալները: Անհրաժեշտության դեպքում սխալներին կարելի է անդրադառնալ փոքր-ինչ ավելի ուշ;
- Պետք է աշակերտներին ինքնավստահություն ներշնչել: Դրա համար պետք է նրանց անընդհատ հնարավորություն տալ՝ հաջողությամբ կատարել առաջադրանքները: Դա դժվար չէ անել, եթե առաջադրանքը սկզբում ունենա պարզ, հասանելի նպատակներ և աստիճանաբար բարդանա: Կարելի է առաջադրանքը բաժանել էտապների և յուրաքանչյուր էտապը հաղթահարելու համար աշակերտներին քաջալերել: Այդ դեպքում, նույնիսկ եթե ամբողջ առաջադրանքը հաջողությամբ չի կատարվում, աշակերտները գոհունակությամբ են զգում թեկուզ մի մասը կատարելու համար;

- պետք է պարզել, թե ինչն է աշակերտներին անհանգստացնում կամ վախեցնում, ինչն է նրանց դժկամության պատճառը, և միասին փորձել հաղթահարել դա:

4. Անհրաժեշտ է դասարանում ստեղծել փոխօգնության, միմյանց օժանդակելու մթնոլորտ: Եթե աշակերտը զգա, որ ուսուցիչն ու դասընկերները պատրաստ են օգնել իրեն, նա ավելի սիրով ու անկաշկանդ կխոսի: Այդ նպատակի համար կարելի է

- թույլ տալ, որ աշակերտներն իրար օգնեն: Կարելի է թույլ տալ, որ խոսելուց առաջ նրանք իրենց պատասխանները ստուգեն կամ քննարկեն ընկերների հետ, որպեսզի ավելի վստահ ելույթ ունենան համադասարանցիների առջև;
- աշակերտներին խմբերի բաժանելիս պետք է հաշվի առնել նրանց մտերմությունը, խառնվածքը, քանի որ նրանք մտերիմ ընկերների հետ ավելի հեշտ ու անկաշկանդ են շփվում: Կարելի է թույլ տալ, որ աշակերտներն իրենք ընտրեն, թե ում հետ են ուզում աշխատել;
- երբեմն կարելի է թույլ տալ մայրենի լեզվի գործածությունը, չբարկանալ և չպատժել աշակերտին մայրենի լեզուն օգտագործելու համար, այլ նրբանկատորեն օգնել նրան՝ վերադառնալ անգլերենին;
- դասարանը պետք է լինի մի միջավայր, որտեղ աշակերտները չեն վախենում հաղորդակցական սխալներ թույլ տալուց: Պետք է խուսափել այն իրավիճակներից, որոնց դեպքում նրանք խուճապի են մատնվում՝ անդադար սխալներ ուղղելը, աշակերտին դաս հարցնելը, որովհետև նա լուռ է, կամ շեղվել է դասից, առանց նախապատրաստվելու համար ժամանակ տալու՝ աշակերտից պատասխան պահանջելը և այլն: Այսպիսի դեպքերում աշակերտից պատասխան լսելու փոխարեն միայն կարելի է նրա դեմքին վախեցած արտահայտություն տեսնել, որը կհասցնի դասարանում բացասական ու լարված մթնոլորտի:

### **Եզրակացություն**

Օտար լեզվով հաղորդակցվելու կարողությունը օգնում է աշակերտին հաջողությունների հասնել ոչ միայն ուսման մեջ, այլև հետագայում կյանքի և աշխատանքային տարբեր իրադրություններում: Ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բանավոր խոսքի դասավանդմանը և աշակերտների համար ստեղծել կենդանի, աշխույժ գրույցի տրամադրող իրավիճակներ, որոնք կապահովեն ակտիվ և հետաքրքիր դաս: Որպեսզի աշակերտներն առավելագույն օգուտ ստանան դասից և ավելի ազատ հաղորդակցվեն միմյանց հետ, անհրաժեշտ է նրանց մեջ սերմանել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, նվազագույնի հասցնել նրանց վախերն ու բարդությունները և ամեն կերպ քաջալերել աշակերտների միջև հաղորդակցությունը:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. (2007) «Անգլերեն լեզու». հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Երևան:
2. (2009) «Անգլերեն լեզու». հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր: Երևան:

3. Brown, H.D. (2001) *Teaching by Principles: An Interactive Approach to Language Pedagogy*. (2nd ed.). San Francisco: San Francisco State University.
4. Byrne D. (1992) *Techniques for Classroom Interaction*. Harlow: Longman.
5. Celce-Murcia, M. (Ed.). (2001) *Teaching English as a Second or Foreign Language*. 3<sup>rd</sup> edition. Boston, MA: Heinle & Heinle.
6. Dornyei, Z. (2001) *Motivational Strategies in the Language Classroom*. UK: Cambridge University Press.
7. Ehrman, M. (1996) *Second Language Learning Difficulties: Looking Beneath the Surface*. Thousand Oaks, CA: Sage.
8. Harmer, J. (2003) *The Practice of English Language Teaching*. 3<sup>rd</sup> edition. UK: Longman.
9. Hymes, D. (1971) *On Communicative Competence*. Philadelphia, PA: University of Pennsylvania Press.
10. Long, M. H. (1985) *Group Work, Interlanguage Talk, and Second Language Acquisition*. TESOL Quarterly, 19(2), 207-228.
11. Nation, I.S.P. (1990) *Teaching and Learning Vocabulary*. New York: Newbury House.
12. Nunan, D. (1991) *Language Teaching Methodology*. / A textbook for teachers. / Ed. by Christopher N. Candlin. New York, London: Prentice Hall.
13. Nunan, D. (2003) *Practical English Language Teaching*. Singapore: McGraw-Hill/Contemporary.
14. Oxford, R.L. (1990) *Language Learning Strategies: What Every Teacher Should Know*. Boston: Heinle & Heinle.

### **Обучение устной речи в средней школе**

Чтобы говорить на иностранном языке требуется больше навыков, чем умение составить грамматически правильные предложения. По нескольким причинам, говорить на иностранном языке сложнее, чем писать. Чтобы помочь студентам преодолеть эти трудности и приобрести коммуникативные компетенции, для учителя необходимо следовать определенным принципам и создать аутентичные ситуации для стимулирования устной речи.

### **Teaching Oral Speech at Secondary School**

Speaking requires more than just being able to make up grammatically correct sentences. Speaking a foreign language is harder than the other productive language skill (writing) for a number of reasons. So, to help students overcome these difficulties and learn communicative competences, it is necessary that teachers follow certain principles and create authentic situations for practicing oral speech.